

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/37, 05.03.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Էլմիրա Ավագյան Սուրենի» Ա/Ձ

Պատվիրատու՝ «Լուսաբաց» մանկապարտեզ ՀՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՁՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» գնանշման հարցում

Գնման առարկան՝ Սննդամթերքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Լուսաբաց» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՁՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի պատվիրատուին չեղարկելու նշված վերոգրյալ ընթացակարգը և հայտարարելու նոր ընթացակարգ, որտեղ ապահովված կլինեն հավասար պայմաններ հնարավոր բոլոր մասնակիցների համար:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել <https://www.e-gov.am/gnumner/> **հղումով.**

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում,

իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Բողոք բերող՝ ԱՁ Էլմիրա Ավագյան Սուրենի

<<ՎՏԲ-Հայաստանրանկ>> ՓԲԸ

ՀՀ 16063014894000

ՀՎՀՀ 81239262

հասցե՝ Ք. Երևան, Դուրյան թ, 49 շ

mail՝ elmira.avagyan70@mail.ru

Հեռ՝ 099-81-11-37

Պարվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի

<<Լուսաբաց>> մանկապարտեզ ՀՈԱԿ -ին

հասցե՝ ք. Չարենցավան, 6-րդ թաղ. 1-ին փող. Թիվ 1

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ << ՉՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1 >>

ծածկագրով գնանշման հարցում,

սննդամթերքի ձեռքբերում



ԲՈՂՈՔ

Պարվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի <<Լուսաբաց>> մանկապարտեզ ՀՈԱԿ -ը /այսուհետք նաև՝ Պարվիրատու/ կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարվել է << ՉՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1 >> ծածկագրով գնման ընթացակարգ /այսուհետք նաև՝ Ընթացակարգ/: Հրավերով մատակարարման պայմաններ վերնագրի տակ նշված է , որ մատակարարումները գնորդի պահանջով պետք է իրականացվեն յուրաքանչյուր աշխատանքային օր՝ օրը 2 անգամ, ընդ որում, մատակարարումներն իրականացվում են հետևյալ հաջորդականությամբ՝ մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 9:30 և 13:30: Ընդ որում, պահանջագիրը Վաճառողին տրամադրվում է յուրաքանչյուր մատակարարումից առնվազն 1 ժամ առաջ (համապատասխանաբար ժամը 08:30-ին և 12:30-ին):

Գտնում եմ, որ մատակարարման սույն պայմանով խախտվել է ՀՀ գնումների մասին օրենքի 3-րդ, 7-րդ և 13-րդ հոդվածները այն իմաստով, որ խտրական վերաբերմունք, ոչ

մյուցակցային և անհավասար պայմաններ են ստեղծվում ընթացակարգի մասնակիցների համար այն իմաստով, որ մատակարարումից մեկ ժամ առաջ պատվիրատուի կողմից պատվեր ստանալով մասկանիցը ոչ մի կերպ չի հասցնի մատակարարել պատվերը պատշաճ և ժամանակին: Մասնավորապես հաց արտադրող ընկերությունը, եթե հացի պատվերը ստանա մատակարարումից մեկ ժամ առաջ, ապա նա չի կարող արտադրել այդ հացը և ճիշտ ժամանակին հասցնել պատվիրատուին, կամ եթե մատակարարը գտնվում է Արմավիրի կամ Արարատի մարզերում, նա մեկ ժամ առաջ պատվերը ստանալուց հետո չի հասցնի մատակարարել այդ ամենը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ պարտավորեցնել Պատվիրատու՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Լուսաբաց» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՉՀ-ԼՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2020/1» ծածկագրով գնման ընթացակարգի պատվիրատուին չեղարկելու նշված վերոգրյալ ընթացակարգը և հայտարարելու նոր ընթացակարգ, որտեղ ապահովված կլինեն հավասար պայմաններ հնարավոր բոլոր մասնակիցների համար:

Կից Ձեզ եմ ներկայացնում բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթուղթը:

Առդիր՝ 1 թերթ:

ԱԶ Էլմիրա Ավագյան Սուրենի



05.03.2020թ.